ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2020թ. **N --- - Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով, և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի հ.178-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Մոնիկա Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Զ.Սարկավագի փողոցի հ.72/3 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 573.1 քմ մակերեսով հողամասից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.05022020-01-0293 վկայական) ընդհանուր 335.07քմ /120.06քմ+215.01քմ/ մակերեսով հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն հասցեին կից տարածքում և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող ընդհանուր 335.07քմ /45.68քմ+289.39քմ/ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Մոնիկա Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Զ. Սարկավագի փողոցի հ.72/3 հասցեում գտնվող 573.1քմ մակերեսով հողամասից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.05022020-01-0293 վկայական) ընդհանուր 335.07քմ /120.06քմ+215.01քմ/ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն հասցեին կից տարածքում գտնվող ընդհանուր 335.07քմ /45.68քմ+289.39քմ/ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Մոնիկա Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի սահմանների նշահարման արդյունքում պարզվել է, որ հարևանությամբ գտնվող բնակելի տների սպասարկման ճանապարհն ընդգրկված է նշված հողամասի սահմաններում և որոշ հատվածներում համադրվում են հարևան բնակելի տների սահմանների հետ: Ստեղծված իրավիճակում հողամասերի փոխանակման միջոցով հնարավոր կլինի ապահովել հարևանությամբ գտնվող բնակելի տների ազատ ելումուտը, ունենալ քաղաքաշինական տեսակետից առավել կանոնակարգված հատված, ինչպես նաև բարձրացնել հողամասի օգտագործման արդյունավետությունը:

Փոխանակվող հողամասն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 7-րդ գոտում:

Համաձայն հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ